«ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «ՎԱԼ-ԿԱՐ» ՍՊԸ ՀԳ-ին

«ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ -ի
Տնօրեն Գ. Ռուբենյանին
ՀՎՀՀ՝ 04240007,
իրավաբանական հասցե՝ ք. Արտաշատ, Շահումյան փ. շ.7/3
էլ. հասցե՝ stopy-groupiic@mail.ru
հեռ.՝ 099-03-58-55, 094-00-02-04

«ՎԱԼ-ԿԱՐ» ՍՊԸ-ի
Տնօրեն Ֆ. Գուլամիրյանին
ՀՎՀՀ՝ 04221191,
իրավաբանական հասցե՝ ՀՀ, Արարատ, Արտաշատ, Մարքսի փ., շ. 6, բն.42
էլ. հասցե՝ khachatryanedgar1@gmail.com
հեռ.՝ 099-03-58-55

ԾԱՆՈՒՑՈՒՄ
(ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ)

Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի գրադարանային համակարգ ՀՈԱԿ-ի /այսուհետ Պատվիրատու/ և Ստրոյ Գրուպ ՍՊԸ-ի և Վալկար ՍՊԸ ՀԳ /այսուհետ Կապալառու/ միջև 2024 թվականի մարտի 26-ին կնքվել է ԱՀԱՔԳՐՀ-ԳՀԱՇՁԲ-24/01 ծածկագրով պայմանագիր: Կնքված պայմանագրի շրջանակներում ստանձնել եք Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի գրադարանային համակարգ ՀՈԱԿ-ի վարչական շենքի հիմնանորոգման աշխատանքների կատարումը:

Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրը ուժի մեջ մտնելու հետո /26.03.2024թ/ և կատարման ժամկետ է սահմանվել՝ պայմանագիրը կողմերի միջև ուժի մեջ մտնելուց 60 օրացուցային օր ժամկետը /25.05.2024թ./:

Քանի որ Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի գրադարանային համակարգ ՀՈԱԿ-ի վարչական շենքի հիմնանորոգման աշխատանքների կատարման նկատմամբ որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքվել և ուժի մեջ է մտել 2024 թվականի մայիսի 02-ին, որի հիմքով Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի գրադարանային համակարգ ՀՈԱԿ-ի և Ստրոյ Գրուպ ՍՊԸ-ի միջև 2024 թվականի ապրիլի 4-ին կնքվել է թիվ 01 համաձայնագիրը այն մասին, որ շինարարական աշխատանքների կատարման սկիզբ է սահմանվել որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների պայմանագիրը ուժի մեջ մտնելուց սկսած:

Ելնելով վերոգրյալից Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի գրադարանային համակարգ ՀՈԱԿ-ի և Ստրոյ Գրուպ ՍՊԸ-ի միջև 2024 թվականի մարտի 26-ի կնքված թիվ ԱՀԱՔԳՐՀ-ԳՀԱՇՁԲ-24/01 ծածկագրով պայմանագիրը ուժի մեջ է մտել 2024 թվականի մայիսի 2-ին և կատարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը կողմերի միջև ուժի մեջ մտնելուց 60 օրացուցային օր /01.07.2024թ/, սակայն 2024 թվականի հոկտեմբերի 24-ի դրությամբ աշխատանքները դեռ ավարտված չեն:

Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ընդհանուր գինը կազմում է 17 460 000 ՀՀ դրամ, որից ըստ կատարողական ակտի կատարված աշխատանքների ընդհանուր ծավալը գումարային արտահայտությամբ կազմում է 7 429 103 ՀՀ դրամ:

Աշխատանքների կատարումը դադարեցվել է Ձեր կողմից 2024 թվականի հուլիս ամսից սկսած՝ անբավարար ֆինանսական միջոցների պատճառաբանությամբ:

Բազմաթիվ անգամ բանավոր եղանակով տեղեկացվել է Ձեզ աշխատանքները վերսկսելու, պայմանագրային պարտավորությունները պատշաճ կատարելու մասին, սակայն մինչ օրս աշխատանքները չեն վերսկսվել:

Արտաշատ քաղաքի գրադարանային համակարգ ՀՈԱԿ-ի տնօրենի, 2024 թվականի հոկտեմբերի 24-ի էլեկտրոնային փոստի միջոցով, Ձեզ ուղղված գրությամբ պահանջվել է երկու օրացուցային օրվա ընթացքում վերսկսել աշխատանքները և տալ պարզաբանուում աշխատանքների չկատարման վերաբերյալ, սակայն Ձեր կողմից չի արձագանքվել, որից հետո 2024 թվականի հոկտեմբերի 11–ին նորից գրությամբ էլեկտրոնային փոստի միջոցով Ձեզ ուղղված գրությամբ պահանջվել է վերսկսել աշխատանքների կատարումը:

Խախտվել է Պայմանագրի 1.1 կետը, շուրջ 115 /մեկ հարյուր տասնհինգ/ օրացուցային օր չեք կատարել Ձեր կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետով, հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի բ) ենթակետը, 8.7 , 8.11 կետերը, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածը, 466-րդ հոդվածի 3-րդ մասը, Արտաշատ քաղաքի գրադարանային համակարգ ՀՈԱԿ-ը 2024 թվականի հոկտեմբերի 24-ից ամբողջությամբ և միակողմանի լուծում է վերը նշված պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ հիմք ընդունելով Պայմանագրի 3.4.6, 6.3 կետերը պարտավոր եք սույն ծանուցումը ստանալոց հետո 10/տասը/ օրացուցային օրվա ընթացքում Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի գրադարանային համակարգ ՀՈԱԿ–ի 2475503845610000 հաշվեհամարին փոխանցել

ա/ 87 300 /ութսունյոթ հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ՝ որպես տուգանք /Պայմանագրի 6.3 կետի համաձայն/,

բ/ 411 266 /չորս հարյուր տասնմեկ հազար երկու հարյուր վաթսունվեց/ ՀՀ դրամ՝ որպես տույժ 82 աշխատանքային օրվա համար /Պայմանագրի 6.2 կետի համաձայն/, տույժի հաշվարկի հետ անհամաձայնության դեպքում խնդրում ենք ներկայացնելու Ձեր դիրքորոշումը,

գ/ Պայմանագրի ապահովման 2 540 000 /երկու միլիոն հինգ հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ

դ/ Որակավորման ապահովման 3 840 000 /երեք միլիոն ութ հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ գումարները:

Քանի որ ի հայտ են եկել

ա. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. Ենթակետի՝ «խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը»,

բ. Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի՝ « Սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի

վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով»,

հիմքերը, ապա

Առաջարկվում է «ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «ՎԱԼ-ԿԱՐ» ՍՊԸ ՀԳ-ին 10 /տասը/ օրացուցային օրվա ընթացքում վճարել պայմանագրի ապահովման 2 540 000 /երկու միլիոն հինգ հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ և որակավորման ապահովման 3 840 000 /երեք միլիոն ութ հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ գումարները, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում չընդգրկվելու համար: Հակառակ դեպքում պատվիրատուի ղեկավարը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը կներկայացնի Լիազոր մարմնին, իսկ «ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «ՎԱԼ-ԿԱՐ» ՍՊԸ ՀԳ-ի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված պայմանագրի ապահովման և որակավորման ապահովման ապահովումները սահմանված կարգով կներկայացնի «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ՝ վերոնշյալ գումարները գանձելու և Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի գրադարանային համակարգ ՀՈԱԿ-ի 2475503845610000 հաշվեհամարին փոխանցելու նպատակով, ինչպես նաև վճարել հաշվարկված տույժերը և տուգանքը :

Արտաշատ քաղաքի գրադարանային համակարգ ՀՈԱԿ-ի տնօրեն՝ Վ. Հովհաննիսյան

«24» հոկտեմբերի 2024թ.